Քննարկվել և հավանության է արժանացել
Տարրական կրթության մեթոդական միավորման
2023թ. հոկտեմբերի «16»-ին կայացած նիստում:
Մեթոդական միավորման նախագահ _____ Ա. Հարությունյան
Տնօրենի ուս. աշխատանքի գծով տեղակալ _____ Ա. Առաքելյան

Հաստատում եմ՝
Լոռու մարզի Վանաձորի ծովակալ
Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի
տնօրեն _____ Տ. Հովսեփյան
«16» հոկտեմբեր 2023թ.

Վանաձորի ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց

2023-2024 ուսումնական տարի

Տարրական կրթության մեթոդական միավորման

աշխատանքային պլան

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել մայրենի, մաթեմատիկա, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա առարկաների դասավանդումը դպրոցում:Բարձրացնել յուրաքանչյուր դասի արդյունավետությունը՝ լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը: Կազմակերպչական աշխատանքներ տանել երիտասարդ և սկսնակ ուսուցիչների մեթոդամանկավարժական, ուսուցչական պատրաստվածության բարձրացման և ինքնակրթության ապահովման ուղղությամբ:

Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և բաց դասերի միջոցով: Մանկավարժների կարևորագույն խնդիրներից մեկը համարել ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր հնարավորությունների չափով մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:

Զարգացնել սովորողների խոսքի կուլտուրան և գրագետ արտահայտման կարողությունները դասավանդման պրոցեսի և հաղորդակցության ժամանակ:

Ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները նպատակաուղղել՝

- Դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ակտիվ անձ և քաղաքացի:
- Բացահայտել աշակերտների անձնային որակները և ապահովել ակտիվ

մասնակցությունը դասապրոցեսին:

- Սերմանել սեր, հարգանք և հպարտություն հայրենիքի հանդեպ:

Դաստիարակել 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ, ինքնավստահ, խելացի, ստեղծագործ, հայրենասեր սերունդ:

Ծանոթացնել գնահատման տեսակներին, ուշադրություն դարձնել ***գնահատման նոր կարգին*** /2-րդ դասարան / : Գնահատումը կատարվելու է բնութագրիչների միջոցով ։

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատումն իրականացվում է նույն սկզբունքներով՝ ապահովելով սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված խելամիտ հարմարեցումները, մատչելի ձևաչափերը, անհատական օժանդակ սարքավորումներն ու միջոցները:

Ծանոթացնել երկարօրյա խմբերի և ուսումնական խմբակների ձևավորման կարգին:

Ուշադրություն դարձնել ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվող երկարօրյա ուսուցմանը:

Երկարօրյա ուսուցումը կազմակերպել այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում:

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու անձ	Նշումներ
1	Մ/մ նիստի կազմակերպում , Անցած ուսումնական տարվա կատարած աշխատանքների քննարկում : Մասնախմբի նախագահի և քարտուղարի ընտրություն, անդամների հաստատում:	2023թ. օգոստոս		
2	Մ/մ նիստում ուսումնասիրել նոր դասագրքերի էլեկտրոնային տարբերակները և ընտրել նախընտրելի հեղինակի դասագիրքը:	2023թ. օգոստոս	ՄՄ նախագահ դասվարներ	
3	Ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի աշխատանքային գործառույթներին:	2023թ.օգոստոս	ՄՄ նախագահ	
4	Մ/մ նիստում քննարկելուց հետո առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին՝ ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի տնօրինման մասին:	2023թ.օգոստոս	ՄՄ նախագահ դասվարներ	
5	Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի կազմում, ուսումնական պլանների քննարկում:	2023թ. օգոստոս	ՄՄ նախագահ դասվարներ	
6	Մեթոդմիավորման աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:	2023թ. օգոստոս	ՄՄ նախագահ	
7	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում : Առարկայական թեմատիկ պլանների քննարկում և հաստատում/ 2-րդ դասարան /:	2023թ. սեպտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
8	Քննարկել և հաստատել ուսուցիչների թեմատիկ ծրագրերը, որոնց մեջ ընդգրկված են արդեն հստակեցված գրավորների քանակը: 2-րդ դասարանում թեմատիկ գրավոր աշխատանքները տալ յուրաքանչյուր թեմայից հետո:	2023թ. սեպտեմբեր	ՄՄ նախագահ	

9	Ծանոթացնել դասվարների կամավոր ատեստավորման մեթոդական ուղեցույցում ներկայացված գրականության ցանկում զետեղված 4 ձեռնարկներին:	2023թ. սեպտեմբեր	ՄՄ նախագահ	
10	Էլեկտրոնային մատյանը/ emis.am / վարելու կարգի ներկայացում ։ Օգնել սկսնակ ուսուցիչներին:	2023թ Սեպտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
11	2-րդ դասարաններում նոր չափորոշիչների, ծրագրերի կատարման, կազմակերպման հարցերի քննարկում ։ Սովորողների գիտելիքների, դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների, մեթոդների քննարկում և կիրառում ուսումնական գործընթացում:	2023թ Սեպտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
12	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ։ Դասավանդման առկա խնդիրների վերաբերյալ քննարկում ։	2023թ. Հոկտեմբեր	ՄՄ նախագահ անդամներ	
13	Փոխադարձ դասալսումների կազմակերպում՝ 1- ից 4- րդ դասարաններում ։ Սովորողների գիտելիքների, դասավանդման որակի բարձրացման նպատակով ։	2023թ. Հոկտեմբեր	ՄՄ նախագահ անդամներ	
14	Օրվա պլանի կազմում ԽԻԿ համակարգով, հաշվի առնելով ծրագրի չափորոշչային պահանջները:	2023թ. Հոկտեմբեր	ՄՄ նախագահ անդամներ	
15	.Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ։ Ծանոթացնել մասնախմբի անդամներին ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչներին և դրանց շնորհման չափանիշներին՝ մղելով նրանց տարակարգ ստանալուն:	2023թ. Նոյեմբեր	ՄՄ նախագահ և անդամներ	
16	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, «Գնահատման գործիքներ. Ռուբրիկ» թեմայով ։	2023թ. Նոյեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	

17	Հետևել համացանցի www.armedu.am, www.lib.armedu.am, ԿԶՆԱԿ-ի կայք էջերին, մասնագիտական ամսագրերին և քննարկել:	2023թ. Նոյեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
18	Մեթոդական ցուցումներ 2023-2024 ուս. տարում գնահատման չափորոշչի պահանջների կատարման ուղղությամբ՝ ձևավորող գնահատման տեսակների կիրառման գործիքների քննարկում և մշակում:	2023թ. Նոյեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
19	Փոխադարձ դասալսումների կազմակերպում և քննարկում: Մաթեմատիկայի դասաժամերին 1-4-րդ դասարաններում: Օրվա պլանների ստուգում:	2023թ. Նոյեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ և անդամներ	
20	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում : Ուսումնական ծրագրերի կատարման ստուգում: Փոխադարձ դասալսումների արդյունքների վերլուծություն: Կարդալու և կարդացածը հասկանալու տեխնիկայի ստուգում 2-4- րդ դասարաններում:	2023թ. Դեկտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
21	Առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության ամփոփում: 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների քննարկում, կազմակերպում :	2023թ Դեկտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
22	Սովորողների գիտելիքների, դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների, մեթոդների քննարկում և կիրառում ուսումնական գործընթացում:	2023թ. Դեկտեմբեր	Տնօրենի ուս. գծով տեղակալ ՄՄ նախագահ	
23	Սովորողներին ներգրավել «Այբ» կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող «Մեղու», «Կենգուրու»և «Ռուսական արջուկ» մրցույթներին:	/հոկտեմբեր, նոյեմբեր, մարտ/	ՄՄ նախագահ և անդամներ	

24	Վերահսկել 1-4 դասարանների սովորողների հաճախումները, բացակայությունների բնույթը, վարքը, առաջադիմությունը։ Կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն։	2023թ. Դեկտեմբեր	ՄՄ նախագահ անդամներ	
25	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ։ Բանավոր, թեմատիկ գրավոր աշխատանքների գնահատման կատարողականի ստուգում:	2024թ. Հունվար	ՄՄ նախագահ և անդամներ	
26	Գնահատման նոր կարգի համաձայն միավորային ընթացիկ, ձևավորվող,բնութագրիչ և ամփոփիչ գնահատման գործընթացի քննարկում։	2024թ. Հունվար	ՄՄ նախագահ և անդամներ	
27	Կազմակերպել անհատական աշխատանք տարրական դասարաններում դժվար դաստիարակվող, առողջական խնդիրներ ունեցող և անապահով պայմաններում գտնվող ռիսկային խմբերի սովորողների հետ։	Պարբերաբար	ՄՄ նախագահ և անդամներ	
28	Ձմեռային արձակուրդի ընթացքում ուշադրության կենտրոնում պահել չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները։	2024թ. Հունվար	ՄՄ նախագահ և անդամներ	
29	ԿԱՊԿ-ու սովորողների կրթությունը կազմակերպել «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հաստատության 2023-2024 ուստարվա օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա, յուրաքանչյուր սովորողի համար կազմել ԱՈՒՊ: Համագործակցել դպրոցի հոգեբանի և ուսուցչի օգնականի հետ։	2023թ-2024թ Սեպտեմբեր-Հունվար	ՄՄ նախագահ և անդամներ	
30	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում ։ Տարրական դասարաններում հասկանալով ընթերցանության կազմակերպման հարցի քննարկում։	2024թ. Փետրվար	ՄՄ նախագահ և անդամներ	

31	ՏՀՏ-ի օգտագործումը դասերի ժամանակ:Նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացում: Դասավանդման մեթոդների քննարկում և կիրառում:	2024թ. Փետրվար	ՄՄ նախագահ և անդամներ	
32	Դասղեկական ժամերին կազմակերպել 1- 4 դասարաններում մայրենիի շաբաթ /Թումանյանական օրեր,գրքի նվիրում, Մայրենիի միջազգային օր /:	2024թ. Փետրվար	ՄՄ նախագահ և անդամներ	
33	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում: Սովորողների դասավանդման որակի բարձրացմանն ուղղված նոր տեխնոլոգիաների, մեթոդների քննարկում, կիրառում: Դպրոց-ծնող համագործակցության ընդլայնմանն ուղղված սեմինարների կազմակերպում:	2024թ. Մարտ	ՄՄ նախագահ և անդամներ	
34	Տարրական կրթության մեթոդական միավորման տասնօրյակի կազմակերպում և անցկացում /փորձարարական դասեր/	2024թ. Մարտ	ՄՄ նախագահ և անդամներ	
35	Սովորողներին ներգրավել շախմատի ամենամյա օլիմպիադաներին ;	2024թ. Մարտ	Շախմատի ուսուցիչ ՄՄ նախագահ և անդամներ	
36	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում Թեմատիկ գրավոր աշխատանքների անցկացում, քննարկում և վերլուծություն Բացակայությունների հարցի քննարկում:	2024թ. Ապրիլ	ՄՄ նախագահ և անդամներ	
37	Գիտելիքների ստուգման նախապատրաստում / 4-րդ դասարաններում մայրենի և մաթեմատիկա առարկաներից / : Հենվելով ԿԳՄՍ-ի կողմից երաշխավորված դասագրքերի և ծրագրերի վրա, կազմել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման թեստեր՝ 4 տարբերակով:	2024թ. Ապրիլ-մայիս	ՄՄ նախագահ և անդամներ	

38	4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում։	2024թ. Մայիս	ՄՄ նախագահ և անդամներ	
39	Նախորդ ամսվա աշխատանքային գործունեության ամփոփում։ 1-ին և 2-րդ կիսամյակի աշխատանքների վերլուծություն՝ կատարած աշխատանքների ձեռքբերումներն ու բացթողումները։	2024 թ. Հունիս	ՄՄ նախագահ և անդամներ	
40	4-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն և ամփոփում։	2024 թ. Հունիս	ՄՄ նախագահ և անդամներ	